Ծրագրի համար - 54673

Կարգավիճակ – Գտնվում է ուսումնասիրման փուլում

Երկիր - Հայաստան

Արդյունաբերության ոլորտ - Համայնքային ենթակառուցվածքներ

Ծանուցման տեսակ - Պետական

Բնապահպանական կատեգորիա - Ա

Հաստատման ամսաթիվ - Հոկտեմբերի 7, 2026 թ.

Հրապարակման ամսաթիվ - Հունիսի 19, 2026 թ.

Ծրագրի նկարագրություն

Մինչև 63 միլիոն եվրոյի չափով (տրանշային) պետական վարկ Հայաստանի Հանրապետությանը («Վարկառու»)՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի օգտին, որը պատասխանատու է պետական սեփականություն հանդիսացող ջրային ակտիվների կառավարման և անվտանգ օգտագործման համար: Ներդրումը կաջակցի Հայաստանում հետևյալ հինգ ջրամբարների կառուցմանը՝ Քասախ, Լիճք, Ելփին (Տրանշ 1) և Արթիկ, Աստղաձոր (Տրանշ 2) («Ծրագիր»):

Ծրագրի նպատակները

Ջրամբարները Հայաստանի կլիմայական հարմարվողականության ռազմավարության կարևոր բաղադրիչ են, քանի որ գյուղատնտեսական արտադրությունն այժմ սահմանափակված է տարվա ընթացքում ծայրահեղ հիդրոլոգիական տատանումների և ոռոգման համար ջրի հասանելիության շարունակական նվազման պատճառով: Ծրագիրը, որը նախատեսվում է դառնալ ավելի ընդգրկուն՝ համապետական ծրագրի առաջին փուլը, նպատակ ունի բարձրացնել ջրային և պարենային անվտանգությունը, ներառյալ կլիմայական դիմակայունությունը, ինչպես նաև բարելավել ոռոգման ջրի հասանելիությունը տեղական բնակչության համար այն բնակավայրերում, որտեղ գյուղատնտեսությունը հիմնական տնտեսական գործունեությունն է:

Անցումային ազդեցություն

Անցումային ազդեցության միավոր՝ 60:

Անցումային ազդեցություն՝ 60:

Անցումային ազդեցություն՝ Կանաչ:

Հիմնական որակ՝ Կանաչ:

Ոռոգման համար նախատեսված ջրամբարներն ուղղակիորեն հարմարվում են ծրագրի տարածքում ջրային սթրեսի և երաշտների սպառնալիքին:

Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետություն
Վարկառուն Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Ֆինանսների նախարարության («ՖՆ»):

Շահառուն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն է:

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

63,000,000.00 Եվրո

42.1 միլիոն եվրոյի չափով 1-ին տրանշը (որի տրամադրումը կվավերացվի ստորագրման պահին) կհամաֆինանսավորվի Եվրոպական միության հարևանության ներդրումային հարթակի (ԵՄ NIP) և Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության («E5P») 8.3 միլիոն եվրոյի կապիտալ դրամաշնորհի միջոցով: Մինչև 20.9 միլիոն եվրոյի չափով 2-րդ տրանշը (որը պետք է տրամադրվի ավելի ուշ փուլում) նախատեսվում է համաֆինանսավորել ԵՄ NIP-ի և այլ աղբյուրների 3.7 միլիոն եվրոյի կապիտալ դրամաշնորհով:

Ծրագրի ընդհանուր արժեքը

90,000,000.00 Եվրո

ՎԶԵԲ-ի մինչև 63.0 միլիոն եվրոյի վարկը կհամաֆինանսավորվի 12 միլիոն եվրոյի ընդհանուր ներդրումային դրամաշնորհներով և 15 միլիոն եվրոյի չափով տեղական մասնակցությամբ (ԱԱՀ):

Հավելյալություն

ՎԶԵԲ-ն առաջարկում է ֆինանսավորում, որը շուկայում հասանելի չէ այլ առևտրային աղբյուրներից՝ խելամիտ պայմաններով և դրույթներով: Ավելին, ՎԶԵԲ-ի փորձը տվյալ ոլորտում կնպաստի բարելավված չափանիշների կիրառմանը:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

2019 թվականի շրջակա միջավայրի և սոցիալական քաղաքականության համաձայն՝ ծրագիրը դասակարգվել է որպես «Ա» կարգի և պահանջում է բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում (ԲՍԱԳ) հինգ ջրամբարներից յուրաքանչյուրի համար՝ ամբարտակի մեծ շեմի պատճառով: Բնապահպանական և սոցիալական համապատասխանության ուսումնասիրությունը (ԲՍՀՈՒ) գտնվում է ավարտական փուլում ՝ ակնկալելով Հաճախորդի կողմից կենսաբազմազանության գործողությունների ծրագրերի (ԲԳԾ) հաստատմանը: Ջրային կոմիտեն ավարտել է ազգային բնապահապանական ազդեցության գնահատման («ԲԱԳ») գործընթացը, և 2024 թվականի վերջին փորձագիտական գնահատականը դրական եզրակացություններ է տվել: ԲՍՀՈՒ-ն բաղկացած էր ազգային ԲԱԳ-երի վերանայումից և դրանց թարմացումից՝ Հայաստանի շրջակա միջավայրի վերաբերյալ կանոնակարգերի և Բանկի կատարողականի պահանջների («ԿՊ»)

միջև առկա բացերը լրացնելու համար: Բոլոր ջրամբարների վերանայված ԲՍԱԳ հաշվետվությունները պարունակում են այլընտրանքների (ներառյալ տեղանքը, նախագծումը և հզորությունը) համապարփակ վերլուծություն, ներառյալ «առանց ծրագիր» տարբերակը: Անդրսահմանային ազդեցության գնահատումը չի բացահայտել որևէ ազդեցություն նստվածքային բեռի, հիդրոլոգիայի կամ ձկնային ռեսուրսների վրա: Կուտակային ազդեցության գնահատումը նշել է, որ ծրագիրը որևէ էական ազդեցություն չի առաջացնի: Շինարարության ընթացքում կլինեն ժամանակավոր և տեղայնացված մթնոլորտային արտանետումներ, աղմուկ, թրթռում և երթևեկության վրա ազդեցություններ, որոնք կարող են մեղմվել շինարարություն իրականացնող կապալառուների կողմից համապատասխան կառավարման պլանների իրականացմամբ: Շինարարության փուլը կապված կլինի աշխատուժի ժամանակավոր հոսքի և աշխատանքային պայմանների վրա ազդեցության, աշխատանքային իրավունքների հնարավոր խնդիրների և առողջության ու անվտանգության վրա ազդեցության հետ, որոնք կկառավարվեն յուրաքանչյուր տեղամասի համար նախատեսված բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի (ԲՍԿԾ) և համապատասխան ենթակառավարման ծրագրերի միջոցով, ինչպիսիք են շինարարական տեղամասի կառավարման պլանը, ներառյալ տեղամասում վարքագծի կանոնագրքի և տեղամասի կառավարման ենթապլանները, առողջության և անվտանգության կառավարման պլանները և երթևեկության կառավարման պլանը, որոնք մշակվելու են շինարարություն իրականացնող կապալառուների կողմից:

ԲՍՀՈՒ-ն սահմանել է, որ ծրագիրը չի ենթադրի որևէ ֆիզիկական վերաբնակեցում: Հողերի մշտական զավթման պահանջները կհանգեցնեն որոշակի տնտեսական տեղահանման: Աստղաձորի, Արթիկի և Քասախի ջրամբարների կառուցումը տարբեր համամասնություններով կազդի մասնավոր, համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերի և խոտհարքների վրա, մինչդեռ Լիճքի ջրամբարը նաև ազդեցություն կունենա խառը գյուղատնտեսական և հանքարդյունաբերական օգտագործման վրա, իսկ Ելփինի ջրամբարը կտեղակայվի համայնքային սեփականության տակ գտնվող, վատ որակի վարելահողերի վրա՝ այլընտրանքային արոտավայրերով: Անկախ խորհրդատուների կողմից ծրագրի համար մշակվել է Վերաբնակեցման շրջանակ («ՎՇ»), որը համապատասխանում է PR 5-ին, և Հաճախորդը իրականացնում է առանձին ջրամբարների վերաբնակեցման գործողությունների ծրագրերի վերջնական մշակում՝ հիմնվելով այս ՎՇ-ի վրա:

ԵՄ-ի հետ առևտրի և համագործակցության համաձայնագրի շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորություններին համապատասխան՝ անցկացվել են մի շարք սեզոնային կենսաբազմազանության դաշտային հետազոտություններ, և բացթողումների վերլուծության գծով խորհրդատուների կողմից ավարտվել է համապատասխան գնահատման ընթացակարգը: Յուրաքանչյուր ջրամբարի համար իրականացվել է կրիտիկական բնապահպանական գնահատում (ԿԲԳ), և բոլոր հինգ ջրամբարների համար հայտնաբերվել են կենսաբազմազանության առաջնահերթ առանձնահատկություններ (ԿԱԱ) և կրիտիկական միջավայրեր (ԿՄ): Աստղաձորի ջրամբարի տարածքը գտնվում է թեկնածու համարվող Սևանի զմրուխտե տարածքի ներսում, ներառյալ Սևանա լիճը՝ հարակից ջրային և ցամաքային

էկոհամակարգերով: Լիճքի ջրամբարը գտնվում է Արևիկի թեկնածու զմրուխտե տարածքի սահմաններում, որտեղ կա բարձր արժեքավոր կենսաբազմազանություն, այդ թվում՝ վտանգված և էնդեմիկ բույսերի և կենդանիների տեսակներ: Հետևաբար, ծրագիրը պահանջում է կենսաբազմազանության կառավարման պլանի և կենսաբազմազանության գործողությունների պլանի մշակում և իրականացում՝ զուտ կորստի բացակայության և զուտ աճի պահանջները բավարարելու համար: ԿԳՊ-ները մշակվել են և սպասում են Ջրային կոմիտեի հաստատմանը:

Բնապահպանական և սոցիալական համապատասխանության ուսումնասիրությունը (ԲՍՀՈՒ) ջրամբարների որոշ տեղանքներում հայտնաբերել է մշակութային ժառանգության վայրերի և առարկաների առկայություն: Հնագիտական, պատմա-ճարտարապետական և հոգևոր հուշարձաններ, մեկ բնական հուշարձան և մեկ երկրաբանական հուշարձան գտնվում են Քասախի ջրամբարի ջրամբարի ուրվագծային տարածքում և պաշտպանության գոտում: Ելփինի տարածքում հայտնաբերվել են մի քանի արհեստական քարե կառույցներ, որոնք, հավանաբար, ծառայել են որպես անասնապահական գործառույթ և կարող են թվագրվել ուշ միջնադարով կամ խորհրդային դարաշրջանով: Արթիկի ջրամբարի ոռոգման ջրանցքի մոտակայքում հայտնաբերվել են տապանաքարեր և այլ մշակութային և պատմական հուշարձաններ: Աստղաձորի տեղանքի հնագիտական հետազոտության ընթացքում հաստատվել են «Վանքի բերդ» հնագիտական համալիրի սահմանները և հայտնաբերվել են նոր գտածոներ, որոնք ներառում են ամբողջությամբ կամ մասնակիորեն պահպանված կառուցվածքային մնացորդներ, ամբողջական և թալանված դամբարաններ, առանձին պատերի և կառույցների մնացորդներ, միջնադարյան և ժամանակակից խաչքարեր, խեցեղենի բեկորներ պարունակող կտրված իրեր և կերամիկական նյութի մակերեսային գտածոներ, ի թիվս այլոց: Հետևաբար, համապատասխան մարմինների հետ խորհրդակցելու կարիք կլինի որոշելու, թե արդյոք կարիք կա փրկարարական պեղումներ և առարկաների տեղափոխում իրականացնել: Դրանք կկառավարվեն PR 8-ին համապատասխան մշակութային ժառանգության կառավարման պլանի միջոցով:

Ծրագրի շահագրգիռ կողմերի պատշաճ ներգրավվածությունն ապահովելու համար ազգային ԲԳԾ գործընթացի շրջանակներում անցկացվել են հանրային խորհրդակցությունների չորս փուլ, ինչպես նաև նախագծի ազդակիր համայնքների հետ խորհրդակցությունների շարք՝ վերաբնակեցման շրջանակի մշակման շրջանակներում: Ընդհանուր առմամբ, ծրագրի տարածքում գտնվող համայնքները աջակցում են ծրագրին: Լրացուցիչ հանրային խորհրդակցությունների հանդիպումներ կանցկացվեն 2026 թվականի հուլիսին՝ Բանկի 120-օրյա հանրային խորհրդակցությունների և հրապարակման ժամանակահատվածի շրջանակներում՝ Երևանում և ծրագրի յուրաքանչյուր վայրում: Յուրաքանչյուր վայրի համար մշակվել և հաստատվել են շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրերը (ՇԿՆԾ): ՇԿՆԾ-ները պարունակում են մանրամասն միջոցառումներ շահագրգիռ կողմերի շարունակական ներգրավման և բողոքների կառավարման համար՝ ծրագրի ողջ տևողության ընթացքում:

ԲՍԱԳ հրապարակման փաթեթը ներառում է յուրաքանչյուր ջրամբարի համար 5 առանձին ԲՍԱԳ հաշվետվություն, ոչ տեխնիկական ամփոփում (ՈՏԱ), առանձին

բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրեր (ԲՍԿԾ), վերաբնակեցման շրջանակ (ՎՇ) և բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր (ԲՍԳԾ): Այս փաստաթղթերը հրապարակվել են ծրագրի տեղանքներում՝ հայերեն լեզվով, և Ջրային կոմիտեի կայքում՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՍԱԳ) փաթեթը երկու լեզուներով նույնպես հրապարակվել է Բանկի կայքում: Հրապարակման փաթեթը կլրացվի կենսաբազմազանության գործողությունների ծրագրերի (ԲԳԾ) և վերաբնակեցման գործողությունների ծրագրերով, որոնց հաստատվելուց հետո կանցկացվեն 120-օրյա հանրային խորհրդակցությունների և հրապարակման ժամանակահատվածում:

Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհի ֆինանսավորում

Ծրագրի շրջանակում նախատեսվում են տեխնիկական համագործակցության (ՏՀ) հետևյալ գործողությունները.

- **Ծրագրի նախապատրաստման ուսումնասիրություններ, ներառյալ տեխնիկական, տնտեսական, շրջակա միջավայրի և սոցիալական ապահովության և ջրառի ազդեցության գնահատումները, ինչպես նաև վերաբնակեցման շրջանակի մշակումը**, որը ֆինանսավորվում է ՎԶԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամի և ՎԶԵԲ-ի կայուն ենթակառուցվածքների հիմնադրամի կողմից:
- **Ծրագրի իրականացման աջակցություն**, ֆինանսավորման աղբյուրը դեռ չի հաստատվել:
- **Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր (ԲՍԳԾ) իրականացման աջակցություն և բնապահպանական ու սոցիալական մոնիթորինգ**, ֆինանսավորման աղբյուրը դեռ չի հաստատվել::
- **Դիմակայուն ջրային ենթակառուցվածքների կառավարում**, որը ֆինանսավորվելու է Եվրոպական Միության հարևանության ներդրումային հարթակի (ԵՄ NIP) կողմից:
- **Ծրագրի իրականացման փորձագետների ներգրավում**, ֆինանսավորման աղբյուրը դեռևս չի հաստատվել::

Ծրագրի 1-ին տրանշը կհամալրվի Եվրոպական միության հարևանության ներդրումային հարթակի (ԵՄ NIP) և Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության (E5P) կողմից տրամադրվող 8.3 միլիոն եվրո կապիտալ դրամաշնորհով, մինչդեռ Ծրագրի 2-րդ տրանշը, ինչպես ակնկալվում է, կհամաֆինանսավորվի Եվրոպական միության հարևանության ներդրումային հարթակի (EU NIP) և այլ աղբյուրների կողմից տրամադրվող 3.7 միլիոն եվրո կապիտալ դրամաշնորհով:

Ընկերության կոնտակտային տվյալները

Մարտիրոս Նալբանդյան
nalbandyanmartiros@gmail.com
+374 (98) 13 14 71
Վարդանանց փ. 13ա, Երևան, 0015, Հայաստան

ԾԱՓ-ի վերջին թարմացում

Հունիսի 19, 2026

Անցումային շրջանի ընկալումը

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168
Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք ՎԶԵԲ-ի գնումներ:

Հեռ.՝ +44 20 7338 6794
Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

ԲՍՔ-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից

բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են ԲՍՔ-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել Տեղեկությունների հասանելիության

քաղաքականության կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ իր՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը ՝ իմանալու ավելին ԾՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես Դիմում ներկայացնել ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՀԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com ՝ ԾՀԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: